01/10.4/2417-09
2009-04-16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Հ. Հակոբյանի, Լ. Սարգսյանի, Ս. Ավետիսյանի, Է. Շարմազանովի և Գ. Մելիքյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ։

1. Նախագծի 1-ին հոդվածում առաջարկում ենք «մասից հանել «մինչև 2007 թվականի հունիսի 30-ը» բառերը փոխարինել «մասն ուժը կորցրած ճանաչել» բառերով։

2. Նախագծի վերնագիրն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին։

3. Նպատակահարմար է նախագծի 1-ին և 2-րդ հոդվածների դրույթները նախատեսել մեկ հոդվածով, քանի որ նշված հոդվածներով փոփոխություններ են նախատեսվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածում։

4. Նախագծի 3-րդ հոդվածում «հրապարակմանը» բառը փոխարինել «հրապարակման օրվան» բառերով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները։

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ընդունելի կհամարի ներկայացված օրենքի նախագիծը՝ նշված առաջարկությունների ընդունման դեպքում։

Միաժամանակ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում նախագիծը քննարկելիս հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ Վ. Տերտերյանը։

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ
Պ-557-05.03.2009-ԳԲ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մայիսի 2-ի հողային օրենսգրքի (ասուհետ՝ Օրենսգիրք) 64 -րդ հոդվածի 5-րդ մասից հանել «մինչեւ 2007 թվականի հունիսի 30-ը» բառերը։

Հոդված 2. Օրենսգրքի 64-րդ հոդվածի 7-րդ մասից հանել «, որի խնամքի տակ կա մեկ եւ ավելի երեխա» բառերը։

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից։

Հիմնավորում

«Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտության

Նախագծով առաջարկվող փոփոխությունները պայմանավորված են տարածքային համաչափ զարգացման մասին կառավարության ծրագրային դրույթով, ընտանիքներին՝ իրենց սահմանամերձ, լեռնային, բարձրլեռնային, երկրաշարժից տուժած կամ լքված բնակավայրերում պահելու, ուրբանիզացիան կանխելու ու ժողովրդագրական խնդիրները լուծելու հիմնախնդիրներով։